

Հայոց լեզվի օլիմպիադայի մարզային փուլ – 2022թ.

Հարցաշար - 10-րդ դասարան

Տևողությունը 180 րոպե

Կորնթար- բլրի լանջին՝ իր անշուք տնակում, միայնակ ապրում էր աշխարհի ամենաբարի ջութակահարը: Երբ **ոսկ-որվում** էին լեռների **երկնամու-** կատարները, նա, կրծքին սեղմած ջութակը, դուրս էր գալիս տնից՝ իր նվագը տարփողելու համայն աշխարհին: Նվագում էր՝ առանց վարձատրության, առանց ակնկալիքի: Նրա **լուսացայ-** մեղեդիները ամոքում էին մարդկանց վշտերը, հուսադրում վհատին, փարատում թախիծը: Այդ մոգական ձայնի ելևէջներից **ա-բարիշտը** դառնում էր բարեհամբույր, գծուծը՝ **բար-ացական**, նենգը՝ ազնիվ, **սինլ-որը**՝ վեհանձն. մեղսագործն անգամ **ապաշխար-ում** էր ծնկաչոք:

Եվ ծերունին տուն էր գնում խաղաղ ու երջանիկ

Լուս-նկա մի գիշեր՝ տունդարձի ճանապարհին ծեր երաժիշտը ատամների **կա-կա-յուն** լսեց. գայլեր էին՝ մի ամբողջ ոհմակ: Ծերունին անվրդով հանեց պատյանից ջութակն ու սկսեց նվագել: Գայլերի կաղկանձն իսկույն դադարեց. նրանք ընդարմացած կանգ առան, ապա գլուխները դրած թաթերին՝ կայծկլտուն աչքերը հառեցին մարդուն:

1. Ի՞նչ էին երգում ջութակի լարերը: Ինչո՞ւ էր ծերունին ամեն օր նվագում մարդկանց համար: Մեկնաբանի՛ր 2 բարդ նախադասությամբ: (2 միավոր)
2. Լրացրո՛ւ տեքստում բաց թողնված տառերն ըստ անհրաժեշտության: (1 միավոր)
3. Գրի՛ր **դրասանգ, աղճատել, կարապետ, տարտամ, ծավի, որկոր, լլկել, առտնին, երևելի գուղձ** բառերի մեկական հոմանիշ կամ բացատրի՛ր բառակապակցությամբ: (2 միավոր)
4. Տրված բառաշարքից առանձնացրո՛ւ կազմությամբ բարդ և ածանցավոր բառերը. **փաստարկ, ամենագետ, վարագույր, ամենաքնքուշ, խրամատ, վարպետ, տրամադիր, փափուկ, երիզորդ, լաջվարդ, քառակուսի, կոճգամ, գետնատարած, դեղին, տարբեր:** (2 միավոր)
5. Տրված բառաշարքից առանձնացրո՛ւ կրկնավորները. **զենք-զրահ, կաս-կարմիր, մրմուռ, սուտ-մուտ, տուն-տեղ, թրթռալ, դեսից-դենից, ակաս-պակաս, գնալ-գալ, դեփ-դեղին, բարբառ, ձյուն-ձմեռ չիր-միր, կենաց-մահու, ալան-թալան, երկու-երեք, քիչ-միչ, ձեռքով-նոտքով:** (1 միավոր)
6. Տեքստից դուրս գրի՛ր փոխանվանաբար գործածված բառերը: (1 միավոր)
7. Կազմի՛ր նախադասություններ **թոթվել-թոթովել, սչրանք-սչճնանք** հարանուններներով: (2 միավոր)
8. Գրի՛ր **բալ, աղերս, ակնակիր, արոր, եղանակ** բառերի համանունները և բացատրի՛ր: (2 միավոր)
9. Բացատրի՛ր **ծառերի հետևում անտառը չտեսնել, ժամավաճառ լինել, անարգանքի սյունին գամել, գողգոթայի ճանապարհն անցնել** դարձվածքները: (2 միավոր)
10. Գրի՛ր շարադրություն «**Ես մի շիվն եմ իմ հողի**» վերնագրով (երկու էջի սահմաններում): (5 միավոր)